

Ա Ր Ց Ա ի

ԵՐԵՔ ՄԵՌԵԱԼ ԵՒՍ ՈՐՈՆՑ ՄԷՋ՝ ՍԱՄՈՒԷԼ ՇԱՀՄՈՒՐԱԴԵԱՆ

ՈՉ ՄԷԿ ԱՐԴԻՒՆՔ ՀՌՈՄԻ ԺՈՂՈՎԷՆ ԾԱՆՈՒՄ՝ ՎԻՃԱԿ ԿԱՊԱՆ, 4 ՄԵՌԵԱԼ

Մարտակերտի արեւմտեան շրջանն է՝ վաղուցս ուր զո՛հ գացած են Սամուէլ Շահմուրադեան եւ երկու ընկերացող, որոնք կը մասնակցէին տեղւոյն մարտերուն: Ուրբաթ, Սեպտեմբեր 11-ին է որ ոռմբ մը ինկած է ճիշդ իրենց գտնուած վայրը, որ ահանուած էր եւ ահանը սլայթած: Երեք մեռեալներէն մէկը մանուաւնդ ծանօթ դէմք մըն է: Արդարեւ, Սամուէլ Շահմուրադեանի անունը կատուած է զլխաւորաբար այն հատորին (ոռւերէն) որ լոյս տեսաւ Երեւան 1989-ին՝ «Սումգայիթի ողբերգութիւնը» եւ ուր լրագրողը հաւաքած էր Սումգայիթի ջարդէն (1988, Փետ. 28) բազմաթիւ վկայութիւններ: Յետագային հատորը լոյս տեսաւ անգլերէնի թարգմանութեամբ Ամերիկա (1990) եւ 1991-ին ալ Ֆրանսերէն՝ «La Tragédie de Soumgaït. Un pogrom d'Arméniens en Union soviétique», présentation de Bernard Kouchner, préface d'Elena Bonner: Թարգմանութիւնը կատարուած էր Ալպէր Անտոնեանի կողմէ, Օրին «Յառաջ»-ի մէջ արտայայտուած էինք այդ մասին:

Սամուէլ Շահմուրադեան ծնած էր 1955-ին, ամուսնացած էր եւ ունէր երկու դուստր: Հայաստանի Գերագոյն Խորհուրդի երեսփոխան էր եւ անդամ Արցախի յանձնախումբին. լրագրող էր եւ գրող:

Սամուէլ Շահմուրադեանի թաղումը կը կատարուի Երեւան, Սեպտեմբեր 15, Երեքշաբթի օր:

Հոռմի նախապատրաստական (Մինսկի) ժողովը, այս անգամ ալ բան մը չէ պատրաստած եւ վերջ դտած է Ուրբաթ, Սեպտեմբեր 11-ին առանց որեւէ որոշում տալու: Կարելի եղած է միայն հաստատել հանդիպումին ձախողութիւնը: Պատուիրակութիւնը վերադարձած էր Մոսկուա, ուրկէ Շարաթ օր կարգ մը անդամներ (Զուլեան, Պէդիրճեան) եւ նախագահի յատուկ խորհրդական՝ Դաւիթ Շահնազարեան Ալմա - Աթա մեկնած են:

Արցախի մէջ, զլխաւորաբար միշտ նոյն շրջանը՝ Մարտակերտ, բուռն մարտեր կը մղուին, դիրքերու կռիւները կը շարունակուին. երկու մեռեալ եւ 15 վիրաւոր կայ հայկական ուժերու մօտ: Ռմբակոծուած է Ստեփանակերտը, բայց զո՛հ չկայ: Հաղրութի դիմաց տեսնուած են աղբրեջանական ուժերու կուտակում (16 հրասայլ). ինչ որ շատ մտահոգիչ է, շատ ծանր է Կասպանի վիճակը, ուր հրետանիով ումբակոծում եղած է եւ չորս մեռեալ կայ, երեքը՝ Ազարակ դիւղը, մէկն ալ՝ Ճակատէն, եւ 15 վիրաւոր:

Ամէն կողմ արդէն կուտակումներ կը տեսնուին: Ռմբակոծութիւններ կան միշտ Կոռնիճորի վրայ եւլն. եւլն.: